Երկրորդ ընթերցում

Կ-442[23]-25.11.2022-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 224-րդ հոդվածի 1-ին մասից հանել «195.1-196-րդ,» և «, 201-րդ հոդվածի 1-ին (բացառությամբ պետական սահմանը հատելիս հայտնաբերված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի) և 2-րդ մասերով» բառերը:

Հոդված 2. Օրենսգրքում լրացնել 224.2-րդ հոդված՝ հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 224.2. Միգրացիայի և քաղաքացիության բնագավառում լիազոր մարմինը**

1. Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի և քաղաքացիության բնագավառում լիազոր մարմինը քննում է սույն օրենսգրքի 195.1-196-րդ հոդվածներով և 201-րդ հոդվածի 1-ին (բացառությամբ պետական սահմանը հատելիս հայտնաբերված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի) և

2-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:»:

Հոդված 3. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում Միգրացիայի և քաղաքացիության ծառայության կանոնադրությունը ուժի մեջ մտնելու օրվանից տասը օր հետո:

2. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Օրենսգրքի 195.1-196-րդ հոդվածներով և 201-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հարուցված գործերը շարունակում է քննել Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը: